որ կառուցուած է սրբատաշ քարերից, կամարակապ և անսիւն շէնք է. մուտքը գտնւում է արևմտեան կողմից. հիւսիսային կողմից նոյնպէս դուռը կայ դէպի պատարագամատոյց սեղանը։ Մատուռի որմերն են ամբողջ մնացել, առաստաղն ու կամարներից մի քանիսը քանդուած են։ Այստեղ երբեմն պատարագ է լինում և ուխտի օրը շրջակայ գիւղերից բաւականին ուխտաւորներ են գալիս։

VI.

ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Գիւղի հարաւ-արևմտեան ծայրին է գտնւում Զաքարէ և Իւանէ Սպասալարների շինել տուած հոյակապ, ընդարձակ և կամարակապ աղբիւրը, որի ջուրը 9 աստիճան Ռէօմիւրի ջերմութիւն ունէր օգոստոսի առաջին կիսում։ Աղբիւրի ջրերը հաւաքւում են եօթն աւազանների մէջ. այդ աւազանները գետնի տակ են և այնքան ընդարձակ ու բարձր, որ կարելի է մէջն ազատ մանգալ։ Աւազանների մէջ ջուրը հաւաքուելով դուրս է ծորում խողովակով և լցւում քարից շինուած երկար նաւերի մէջ։ Վերոյիշեալ եօթն աւազաններից այժմ միայն երկուսի մէջ ջուր կայ։ Աղբիւրի ընդարձակ կամարը մի միջնասիւնով երկու հաւասար մասերի է բաժանուած։

Երկու կամարների երկարութիւնն է 15 արշ. 3 վ., իսկ իւրաքանչիւրինն առանձին 7 արշ. 9 վ.։ Կամարի լայնութիւնն է 6 արշ. 11 վ., բարձրութիւնը $5^1/_2$ արշին։

Աղբիւրի ջրի մի մասը խողովակներով բերուած է վանքի գաւիթը. բերողն եղել է վանքի վանահայր Յարութիւն արքեպիսկոպոս Տէր-Բարսեղեանցը։ Վանքի աղբիւրի փոքրիկ կամարի վրայ արձանագրուած է.

«1835 թ. Յարութիւն արքեպիսկոպոս շինեաց զաղբիւրս այս յորդահոս. ո՛վ վայելողք այս ջրոյս յիշեցէք զսա առ Տէր Յիսուս. սա էր տոհմէն Տէր-Բարսեղեանց և սահմանէն Տա-

ուշայ, անտի Սանահին յաջորդեաց, արդեամբ իւրով զայս օրինեաց»։

Խողովակների փչանալու պատճառով այս ջուրը երբեմն պղտորւում է և անպիտան համ ստանում։

VII.

ՍԱՆԱՀՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Գիւղից ցած, ձորի մէջ, ահռելի դղրդիւնով և փրփրալից ալիքներով սընթաց վազող Դէբէտի կամ Ձորագետի վրայ է ձգուած այն հոյակապ, կամարաձև և քարաշէն կամուրջը, որ իբրև ապացոյց մեր նախնեաց ճարտարապետական հըմտութեան, այսօր ևս լուռ վկայ է իր տակովն անցնող ալիքների ողբաձայն մռնչիւնների....։

Սևորդեաց ձորի այս պատմական կամուրջը շինել է տուել Նանա այրի թագուհին՝ ի յիշատակ իր վաղաթառամ ամուսնու, Լօռու Աբաս թագաւորի և Զաքարէ ու Իւանէ սպասալար եղբայրների։

Կամուրջի երկարութիւնն է 28 սաժէն, լայնութիւնը 5 արշին, կամարի բարձրութիւնը ջրի մակերևոյթից (մեր դիտած ժամանակը, ամառը) 19 արշին. շինուած է կամարների վրայ՝ սրբատաշ քարերից։ Կամուրջի մի ծայրը հաստատուած է ժայռի վրայ, իսկ միւս ծայրն ամուր որմի վրայ և դէպի հարաւ իջնում է աստիճաններով։ Կամուրջի երկու կողմը գտնւում են չորս կոփածոյ քարից քանդակուած առիւծներ, որոնք ժամանակի ընթացքում բաւականին մաշուել են։

Կամուրջի ներքևի ծայրին կայ մի խաչքար՝ կամուրջը շինել տուող Նանա թագուհու հրամանով կանգնեցրած։ Խաչքարի վրայ արձանագրուած է հետևեալը.

«Կամաւն Աստուծոյ ես Նանա յազգէ Բագրատունեաց դուստր իշխանաց իշխան Սարգսի քոյր Զաքարէի և Իւանէի կին Աբասայ թագաւորի որ կեսաւրեայ վախճանեալ է խա-